ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/11

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.01.2019թ. թիվ 26-3/370-19 գրությամբ «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00107502/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.01.2019թ. թիվ ՀՀ/06.3/24-19 գրության հիման վրա, 15.01.2019թ. նախաձեռնել է «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը 09.01.2019թ. թիվ ՀՀ/06.3/24-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ բժշկական նշանակության ապրանքներ ձեռքբերելու նպատակով, իրականացվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի գնահատման և ամփոփման արդյունքում «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Միհրան Համբարձումյանը:

3. <u>«ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.01.2019թ. թիվ 26-3/370-19 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Վլադիմիր Անտաշյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/11 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.01.2019թ. թիվ 26-3/370-19 գրությունը և կից

փաստաթղթերը, ՀՀ առողջապահության նախարարության 09.01.2019թ. թիվ ՀՀ/06.3/24-19 գրությունը, «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.10.2018թ. նիստի թիվ 5, 29.10.2018թ. նիստի թիվ 6, 12.11.2018թ. նիստի թիվ 7, 14.11.2018թ. նիստի թիվ 8, 23.11.2018թ. նիստի թիվ 9 և 23.11.2018թ. նիստի թիվ 10 արձանագրությունները, «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի Բողոքներ քննող անձին հայտնած բանավոր դիրքորոշումը.

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ էր ներկայացրել «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ն՝ Աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով:

Աճուրդի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ Աճուրդի 2-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «ուլտրաձայնային սարքավորումներ» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

«Ուլտրաձայնային հետազոտման սարք 3 տվիչով, անխափան սնուցման սարքով և տպիչով Դիագնոստիկ հետազոտությունների համար նախատեսված հատուկ հնարավորություններով թվային ուլտրաձայնային ստացիոնար համակարգ:

Ճառագայթի թվային ձևավորիչը, ոչ պակաս, քան՝ 12 բիթ,

փոխանցման (հաղորդման) ընդունման թվային վերամշակվող ալիքների քանակը, ոչ պակաս, քան՝ 65000,

դինամիկ տիրույթը, ոչ պակաս, քան՝ 208 Դբ,

լայնաշերտ և մուլտիհաճախականության սկանավորման առկայություն,

Էխո-ազդանշանների զուգահեռ մշակման առկայություն,

Էխո-ազդանշանների քառալիքանի մշակման առկայություն,

ֆոկուսներ ազդանշանի փոխանցման ժամանակ, առնվազն՝ 8,

սկանավորման խորությունը, ոչ պակաս, քան՝ 30 սմ,

պատկերի մեծացում մասշտաբի իրական ժամանակում, ոչ պակաս, քան՝ 16 անգամ, պատկերների սեգմենտար մեծացման առկայություն,

"սառեցված" պատկերի մեծացում, ոչ պակաս, քան՝ 16 անգամ,

B-ռեժիմի առկայություն,

Կեղծ գունավորման քարտեզների քանակը՝ ոչ պակաս քան 6 M–ռեժիմի առկայություն Կեղծ գունավորման քարտեզների քանքկը՝ ոչ պակաս քան 6 • B- և M-ռեժիմների համակցում,

Իմպուլս-ալիքային դոպլերի առկայություն (PW)

• Անկյան կորեկցիան ոչ պակաս, քան՝ +/-79°, քայլը ոչ ավել, քան՝ 2°

• PRF տիրույթը, ոչ պակաս, քան՝ 300 - 27900 Հg.,

• Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը, ոչ պակաս, քան՝ 8 մ/վրկ.

• Հայտնաբերվող մինիմալ արագությունը, ոչ ավել, քան՝ 4 սմ/վրկ.

• B- и PW-ռեժիմների համակցում ռեալ ժամանակում Գունավոր դոպլերի առկայություն • PRF տիրույթը, ոչ պակաս, քան՝ 400 – 25000 Հg

• Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը, ոչ պակաս, քան՝ 181 սմ/վրկ.

• Հայտնաբերվող մինիմալ արագությունը, ոչ ավել, քան՝ 2,6 սմ/վրկ.

• Գունավորման քարտեզների քանակը, ոչ պակաս, քան՝ 8.

• Գունավոր դոպլեր ռեժիմում կադրերի հաճախականությունը/վրկ, ոչ պակաս, քան՝ 227,

• B- և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում,

• B-, M - և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում,

• B-, PW - և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում,

• Սկանավորման անկյան փոփոխության տիրույթը գծային տվիչների համար, ոչ պակաս, քան՝ +/- 10 աստիճան Անընդհատ-ալիքային դոպլերի առկայություն

• Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը, ոչ պակաս, քան՝ 28 մ/վրկ, Էներգետիկ դոպլերի առկայություն (PA) • PRF տիրույթը, ոչ պակաս, քան՝ 400 – 24000 Հg,

• Գունային քարտեզների քանակը, ոչ պակաս, քան՝ 8

• B- և էներգետիկ դոպլեր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում

• Անոթների հունի պատկերավորման բարձր տարածական/ժամանակային լուծման ռեժիմի օգտագործումը բոլոր կոնվեքսային և գծային հաղորդիչներով "• B-, PW- և Անոթների հունի պատկերավորման բարձր տարածական/ժամանակային լուծման ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում Հյուսվածքային հարմոնիկա" • Հիմնական հյուսվածքային հարմոնիկայի ռեժիմ; Բարդ բազմաալիքային պատկերավորում իրական ժամանակում • Բարդ բազմաալիքային պատկերավորումը B- և գունավոր դոպլեր ռեժիմների համակցումով Չափումներ, հաշվարկներ և ծրագրային ապահովումներ հետևյալ հետազոտությունների համար՝ • Գինեկոլոգիական • Հոդային • Մակերեսային օրգանների • B-ռեժիմում պատկերների ավտոօպտիմիզացիա՝ ըստ հյուսվածքների ակուստիկ հատկությունների • Դոպլեր սպեկտրի ավտոօպտիմիզացիա • Տրապեցանման սկանավորում Ինֆորմացիայի պահպանում և արտահանում • Ներկառուցված աշխատանքային կայանի առկայություն • Կոշտ սկավառակի ծավալը ոչ պակաս, քան՝ 500գԲ • Տեսահանգույց ոչ պակաս, քան՝ 2200 կադր, 256 մԲ • Ստատիկ պատկերների արխիվացում կոշտ սկավառակի վրա, ոչ պակաս քան հետևյալ ֆորմատներով՝ jpeg, DICOM • Ստատիկ պատկերների արխիվացում DVD/CD-RW սկավառակի վրա, ոչ պակաս քան հետևյալ ֆորմատներով՝ jpeg, DICOM • Դինամիկ պատկերների արխիվացում կոշտ սկավառակի վրա, ոչ պակաս քան հետևյալ ֆորմատներով՝ MPEG-4 և/կամ AVI, DICOM • Դինամիկ պատկերների արխիվացում DVD/CD-RW սկավառակի վրա, ոչ պակաս քան հետևյալ ֆորմատներով՝ MPEG-4 և/կամ AVI, DICOM • Տվյալների անմիջական տեղափոխում USB քարտի վրա, ոչ պակաս քան հետևյալ ֆորմատներով՝ jpeg և/կամ bmp, MPEG և/կամ AVI, DICOM • Ներկառուցված USB պորտերի քանակը ոչ պակաս, քան՝ 2 • "Թարմ" տվյալների պահպանում ներքին կամ արտաքին աշխատանքային միջավայրերում՝ հետագա վերամշակման հնարավորությամբ Մոնիտոր՝ TFT, ոչ պակաս, քան՝ 17", թույլատվություն, ոչ պակաս, քան՝ 1280x1024, Տվիչներ • Տվիչների միացման պորտերի քանակ, ոչ պակաս, քան՝3 1. Կոնվեքսային տվիչ - էլեմենտների քանակ առնվազն 128, հաճախականությունը, ոչ պակաս, քան՝ 2-4 ՄՀց տիրույթում, դիտարկման անկյունը ոչ պակաս, քան 55 աստիճան, շառավիղը ոչ պակաս,

քան 50 մմ, 2. Գծային տվիչ - էլեմենտների քանակ առնվազն 128, հաճախականությունը, ոչ պակաս, քան՝ 5-13 ՄՀց տիրույթում, բացվածք, ոչ պակաս, քան՝ 40մմ, 3. Ներխոռոչային կոնվեքսային տվիչ, էլեմենտների քանա առնվազն 128, հաճախականությունների դիապազոն ոչ պակաս, քան՝ 5-9 ՄՀց տիրույթում, շառավիղ՝ ոչ պակաս, քան 9մմ, դիտարկման անկյունը առնվազն 168 աստիճան, Սարքի հավաքակազմը՝ Սարք ներբեռնած համապատասխան ծրագրերով Կոնվեքսային տվիչ Գծային տվիչ Ներխոռոչային կոնվեքսային տվիչ (Հեշտոցային տվիչ) Թվային սև-սպիտակ տպիչ Անխափան սնուցման սարք, առցանց տեսակի Մատակարարը պարտավոր է տրամադրել սարքի օգտագործման ձեռնարկ՝ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով Մատակարարը պարտավոր է կատարել տեղադրում և ուսուցում, Մատակարարը պարտավոր է տրամադրել՝ ոչ պակաս քան 1 տարվա երաշխիք Մատակարարը պարտավոր է մատակարարել ք. Աբովյան Հոսանքի սնուցման աղբյուր՝ 220Վ, 50Հց: Ապահովիչների առկայություն: Որակի սերտիֆիկատներ՝ CE կամ FDA Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք Ապրանքը պետք է լինի չօգտագործված:(Կցված ֆայլ՝ lot_2_i_texnikakan_bnutagir.pdf)GENERAL Refrigerant ֆիրմայի, R410A, model – AOG60UMAYT 400V, 50Hz, 16,5kW, կամ համարժեքը»:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 4-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովի 29.10.2018թ. նիստի թիվ 6 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով Ընկերությանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 7-րդ կետով Հանձնաժողովը որոշել է ծանուցել «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումը ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և բնութագրերը՝ Աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով:

Այնուհետև, 12.11.2018թ. կայացած նիստի թիվ 7 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը ներկայացվել են ոչ լիարժեք (առաջարկված ապրանքի բնութագրերը ներկայացված չեն) և հստակեցման կարիք ունեն:

«ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել «Ուլտրաձայնային սարքավորում Qbit7 CHISON Medical Technologies Co.,Ltd/Չինաստան/» ապրանքատեսակի հստակեցված տեխնիկական բնութագիրը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Դիագնոստիկ հետազոտությունների համար նախատեսված թվային ուլտրաձայնային ստացիոնար համակարգ 3 տվիչով, անխափան սնուցման սարքով և թվային սև-սպիտակ տպիչով:

Իմպուլս-ալիքային դոպլերի առկայություն (PW)

Գունավոր դոպլերի առկայություն (Color)

Անընդհատ-ալիքային դոպլերի առկայություն (CW)

Էներգետիկ դոպլերի առկայություն (PA)

Ուղորդված էներգետիկ դոպլերի առկայություն (DPD)

B Mode, 2B Mode, 4B Mode, B/M mode, M mode, CFM Mode, CPA Mode, DPD Mode, B/BC

Mode, CWD, Pulse Doppler Mode, Trapezoidal imaging, Multiple Compound Imaging, SRA, AIO,

2D Steer, Triplex, Quadplex, Free Steering M Mode, TDI, Color M Mode, Curved Panoramic

Imaging, Virtual HD, FHI mode

Մոնիտոր՝ 19”, թույլատվություն՝ 1280x1024,

Տվիչների միացման պորտերի քանակ՝ 4

Ներկառուցված USB պորտերի քանակ՝ 6

DVD/CD-RW սկավառակի առկայություն,

Սկանավորման խորություն՝ 36 սմ,

Պատկերի մեծացում՝ 20 անգամ,

Ճառագայթի թվային ձևավորիչը՝ 12 բիթ,

Փոխանցման /հաղորդման ընդունման թվային վերամշակվող ալիքների քանակ՝184320,

Դինամիկ տիրույթը 165Դբ,

Լայնաշերտ և մուլտիհաճախականության սկանավորում,

Էխո-ազդանշանների զուգահեռ / քառալիքանի մշակման առկայություն,

Ազդանշանի փոխանցման ֆոկուս՝ 8,

Սկանավորման խորություն՝ 36 սմ,

Պատկերի մեծացում իրական ժամանակում՝ 16 անգամ,

"սառեցված" պատկերի մեծացում՝ ամբողջ էկրանով պատկերում,

պատկերների սեգմենտար մեծացման առկայություն իրական ժամանակում,

B-ռեժիմի առկայություն

Կեղծ գունավորման քարտեզների քանակ՝ 1-9

M–ռեժիմի առկայություն

Կեղծ գունավորման քարտեզների քանակ՝ 1-9

B/M ռեժիմների համակցում,

Իմպուլս-ալիքային դոպլերի առկայություն (PW)

Անկյան կորեկցիան՝ +/-80°

PRF տիրույթը՝ 500 - 20000 Հց.,

Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը՝ 16.7 մ/վրկ.

Հայտնաբերվող մինիմալ արագությունը՝ 1.2 սմ/վրկ.

B/PW ռեժիմների համակցում

Գունավոր դոպլերի առկայություն Color

PRF տիրույթը՝ 500 – 20000 Հg

Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը՝ 284 սմ/վրկ.

Հայտնաբերվող մինիմալ արագությունը՝ 0,8 սմ/վրկ.

Գունավորման քարտեզների քանակը՝1-9.

Գունավոր դոպլեր ռեժիմում կադրերի հաճախականությունը/վրկ՝ 495,

B/Color, B/M/Color, B/PW/Color, B/PD, B/PW/Q-Flow /անոթների հունի պատկերավորում/

Սկանավորման անկյան փոփոխության տիրույթը գծային տվիչների համար՝+/- 20°

Անընդհատ-ալիքային դոպլերի առկայություն CW

Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը՝ 96 մ/վրկ,

Էներգետիկ դոպլերի առկայություն (PA)

PRF տիրույթը՝ 150 – 16300 Հg,

Հյուսվածքային հարմոնիկա Tissue harmonica (FHI),

Հյուսվածքային հարմոնիկայի ռեժիմ;

Բարդ բազմաալիքային պատկերավորում,

Չափումներ, հաշվարկներ և ծրագրային ապահովումներ հետևյալ բնագավառների՝

Գինեկոլոգիա, Որովայն, Ուրոլոգիա, Սիրտ, Մուսկուլո-սկելետալ, Մակերեսային

օրգաններ, Մանկաբարձական, Ֆետալ, Փոքր օրգաններ, Վահանաձև գեղձ, Պերիֆերիկ անոթներ,

Օպտիմացնում է աղավաղված 2D պատկերը՝ մեկ կոճակի սեղմակով PW և CW ռեժիմում

Դոպլեր սպեկտրի ավտոօպտիմիզացիա /AIO/

Տվյալների պահպանում հետագա վերամշակման հնարավորությամբ

Կոշտ սկավառակի ծավալը՝ 250-500գԲ

Տեսահանգույց՝ 4000 կադր, 256 մԲ

Պատկերների արխիվացում կոշտ սկավառակի և DVD/CD-RW սկավառակի վրա հետևյալ ֆորմատներով՝ jpeg, Dicom, BMP, AVI cine playback.

Տվյալների անմիջական տեղափոխում USB քարտի վրա,

Ներկառուցված USB պորտերի քանակը՝ 6

Տվիչներ՝

Կոնվեքսային տվիչ - հաճախականություն՝ 2-6.8 ՄՀց, էլեմենտների քանակ՝ 128, դիտարկման անկյուն՝ 60°, շառավիղը՝ 60 մմ,

Գծային տվիչ - հաճախականություն՝ 4-15 ՄՀց, էլեմենտների քանակ՝ 128, շառավիղը՝ 50մմ,

Ներխոռոչային կոնվեքսային տվիչ, հաճախականություն՝ 4-15ՄՀց, շառավիղ՝ 10մմ, դիտարկման անկյուն՝ 171°,

Սարքի հավաքակազմը՝ սարք ներբեռնած համապատասխան ծրագրերով,

կոնվեքսային տվիչ,

գծային տվիչ,

ներխոռոչային կոնվեքսային տվիչ (հեշտոցային տվիչ),

թվային սև-սպիտակ տպիչ,

անխափան սնուցման սարք, առցանց տեսակի

Հոսանքի սնուցման աղբյուր՝ 220Վ, 50Հց: Ապահովիչների առկայություն:

Որակի սերտիֆիկատներ՝ CE և ISO13485»:

Հանձնաժողովի 14.11.2018թ. նիստի թիվ 8 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Հանձնաժողովն արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները.

Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջները	«ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր
Դինամիկ տիրույթը, ոչ պակաս քան՝ 208 Դբ	Դինամիկ տիրույթը 165 Դբ
Իմպուլս-ալիքային դոպլերի առկայություն - PRF տիրույթը, ոչ պակաս, քան՝ 300 - 27900 Հց.,	Իմպուլս-ալիքային դոպլերի առկայություն - PRF տիրույթը՝ 500 - 20000 Հց.,
Գունավոր դոպլերի առկայություն - PRF տիրույթը, ոչ պակաս, քան՝ 400 - 25000 Հց.,	Գունավոր դոպլերի առկայություն - PRF տիրույթը, ոչ պակաս, քան՝ 500 - 20000 Հց.,

Էներգետիկ դոպլերի առկայություն - PRF տիրույթը, ոչ պակաս, քան՝ 400 - 24000 Հց.:	Էներգետիկ դոպլերի առկայություն - PRF տիրույթը, 300 - 16300 Հց.:

Ելնելով վերոգրյալից, հանձնաժողովը որոշել է «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 2-րդ չափաբաժնի մասով մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության տնօրենը հայտնեց, որ 12.11.2018թ. կայացած հայտերի գնահատման նիստի թիվ 7 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը ներկայացվել են ոչ լիարժեք (առաջարկված ապրանքի բնութագրերը ներկայացված չեն) և հստակեցման կարիք ունեն: Ըստ Ընկերության տնօրենի՝ Հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ առկա չէ արձանագրված անհամապատասխանությունների մանրամասն և սպառիչ նկարագրությունը, որի արդյունքում Ընկերությունը հնարավորություն չի ունեցել ճշգրիտ կողմնորոշվել և պահանջվող փաստաթղթում կատարել անհրաժեշտ շտկումները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 46-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ առաջին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝

ապրանքների գնման դեպքում՝ առաջարկվող ապրանքի՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը:

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Նույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին:

- 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

- 7.10 կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.
- 7.12 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:
- 7.16 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն

պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

- 7.17 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ն «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

- Հանձնաժողովը ծանուցել է «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումը ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի բնութագրերը:

- 12.11.2018թ. կայացած նիստի թիվ 7 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը ներկայացվել են ոչ լիարժեք (առաջարկված ապրանքի բնութագրերը ներկայացված չեն) և հստակեցման կարիք ունեն:

- Վերը նշված նիստի արձանագրության մեջ Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները մանրամասն չեն նկարագրվել:

- «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել «Ուլտրաձայնային սարքավորում Qbit7 CHISON Medical Technologies Co.,Ltd/Չինաստան/» ապրանքատեսակի հստակեցված տեխնիկական բնութագիրը:

-- Հանձնաժողովը «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրել է անհամապատասխանություններ, և մերժել է վերջինիս հայտը՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի՝ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պարամետրերին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի բնութագրի գնահատման արդյունքում

արձանագրված անհամապատասխանությունները նիստի արձանագրության մեջ սպառիչ և մանրամասն չնկարագրելով՝ խախտել է Կարգի 46-րդ կետով սահմանված պահանջը, ինչի արդյունքում Ընկերությունն ըստ էության զրկվել է առաջարկվող ապրանքի բնութագրում առկա թերությունների (անհամապատասխանությունների) շտկում կատարելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.01.2019թ. թիվ 26-3/370-19 գրությամբ «ԱՎԵՄԵԴ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00107502/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ